

Եվրոմիության կողմից իրականացված եւ ընթացքի մեջ գտնվող ծրագրերի ցանկ

Կանանց տնտեսական անկախության խթանում Լոռու մարզում

Այս ծրագրի նպատակն է նպաստել կանանց սոցիալական և տնտեսական իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանը Լոռու մարզում: Ծրագիրը մշակում է ինտեգրված ռազմավարություն տեղական մակարդակում՝ ուղղված կանանց տնտեսական անկախության խթանմանն ու տնտեսական աճին նրանց մասնակցության խթանմանը: Ծրագիրն աշխատում է Լոռու մարզի գործազուրկ կանանց, տնային տնտեսությունների ղեկավարների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ : Այն իրականացվում է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի կողմից:

Տևողությունը. դեկտեմբեր 2012 – դեկտեմբեր 2015

ԵՄ ներդրում. 668,015€

Շահառուներ. գործազուրկ կանայք, տնային տնտեսուհիներ

Պետական և մասնավոր գյուղատնտեսական նորարարական նախաձեռնություններ Լոռու մարզում

Ծրագիրը իրականացվում է Ճոճկան գյուղական համայնքի կողմից՝ այս համայնքի գյուղական շրջաններում և հարակից չորս գյուղերում՝ աղքատության կրճատման նպատակով: ԵՄ կողմից ֆինանսավորվող այս պիլոտային ծրագիրն իրականացնում է պետական և մասնավոր գյուղատնտեսական նորարարական նախաձեռնություններ:

Տևողությունը. հունվար 2013 – հուլիս 2014

ԵՄ ներդրում. 149,940€

Շահառուներ. Տեղական համայնք

Մշակութային կրթության փորձնական նախաձեռնություն՝ ՀՀ գյուղական համայնքներում ապրող երեխաների և երիտասարդների համար

Ծրագրի նպատակն է աջակցել աղքատության կրճատմանը Հայաստանի գյուղական շրջաններում և բարելավել կյանքի պայմանները՝ արվեստը, մշակույթը և կրթությունը առավել որակյալ և մատչելի ձևով հասանելի դարձնելու միջոցով: Ծրագիրն իրականացնում է Ազատամիտ սերնդի երիտասարդություն ՀԿ-ն:

ԵՄ ներդրում. 149,965.00€

Տևողությունը. հունվար 2013 – հուլիս 2014

Իրականացման վայրը. Երևան և մարզեր

Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում

Այս երեքամյա ծրագիրը համատեղում է ԵՄ, ՄԱԿ Զարգացման ծրագրի և Հայաստանի կառավարության ջանքերը գենդերային հավասարակշռությունը խթանելու համար: Ծրագիրն աջակցում է կանանց մասնակցությունը տեղական ընտրությունների գործընթացին, ինչպես նաև օգտագործում է մի շարք նորարարական մեթոդներ, տեխնիկաներ և գենդերային տրանսֆորմացիայի ծրագրեր՝ օգնելով նվազեցնել գենդերային խտրականությունը, որին կանայք բախվում են Հայաստանում սոցիալական և տնտեսական որոշումների կայացման գործընթացներում:

Տևողությունը. հուլիս 2012 – հուլիս 2013

ԵՄ ներդրում. 525,000€

Շահառուներ. Երևանի և 10 մարզերի գյուղական և քաղաքային համայնքների կանայք

Բարելավում ջրամատակարարման եւ ջրահեռացման կառավարման

Այս ծրագիրը ստեղծվել է ԵՄ-ի, Վերակառուցման եւ զարգացման Եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի կողմից և նպատակ ունի վերականգնել համայնքային ջրամատակարարումը Հայաստանի մի շարք մարզերի 16 քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև բարելավել կոյուղաջրերի մշակման ծառայությունները 2 քաղաքներում: Ընդհանուր առմամբ 17 քաղաքներ և գյուղեր ներառված են ծրագրում:

Տևողությունը. դեկտեմբեր 2011 – հուլիս 2014

ԵՄ ներդրում. 642,000€

Շահառուներ. 16 քաղաքների տեղական համայնքները

Իրականացման վայրը. Երևան, Լոռի Տավուշ, Գեղարքունիք, Արարատ, Սյունիք, Շիրակ

Գործնական քայլեր մարզային համայնքներում կենսապայմանները բարելավելու ուղղությամբ

Այս ծրագիրը աջակցում է Հայաստանի մարզերում աղքատության նվազմանը՝ համագործակցելով տեղական իշխանությունների և համայնքային կազմակերպությունների հետ: ԵՄ դրամաշնորհով գործելով՝ այս ծրագիրը գնահատել է տեղական կարիքները Հայաստանի 50 համայնքներում՝ խնդիրները բացահայտելու և գործնական քայլերով իրավիճակը բարելավելու նպատակով:

Ծրագիրը իրականացվում է տեղական Համայնքային երկխոսությունների եւ նախաձեռնությունների կենտրոնի կողմից՝ Հայաստանի 10 համայնքներում:

Տևողությունը. դեկտեմբեր 2011 – դեկտեմբեր 2013

ԵՄ ներդրում. 150,000€

Շահառուներ. տեղական համայնքներ

Իրականացման վայրը. Երևան և բոլոր մարզեր

SOS Մշակույթ. Մոռացված մշակութային արժեքների վերածնունդ

SOS Մշակույթը նպատակ ունի ԵՄ օգնությամբ գրանցել և պահպանել վտանգված մշակութային արժեքները Հայաստանի հեռավոր սահմանային մարզերում և Վրաստանում՝ ներգրավելով տեղացիներին: Տեղական համայնքների ներգրավումը իր հերթին նպաստում է այս շրջանների տնտեսական, մշակութային և սոցիալական զարգացմանը: Ծրագիրը իրականացվում է Հայաստանում Վայրի բնության եւ մշակութային արժեքների Պահպանման հիմնադրամի կողմից:

Տևողությունը. հոկտեմբեր 2011 – հոկտեմբեր 2013

ԵՄ ներդրում. 492,754€

Իրականացման վայրը. Լոռի, Տավուշ և Վրաստան